

ՍԻՄԵՈՆ ԵՐԵՎԱՆՑԻ (1710—1780)

ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ՏՊԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ԵՐԿՈՒՀԱՌՅՈՒՐԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Կյանքը և գործունեությունը

Այս տարի լրացավ Մայր Աթոռի տպարանի հիմնադրության երկուհարյուրամյակը:

Այս հիշարժան իրադարձության առիթով հունվարի 28-ին գրված հայրապետական կոմիտեի վեր հանելով մշակութային այդ մեծ ձեռնարկի պատմական նշանակությունը մեր ազգային-եկեղեցական տարեգրության մեջ, 1972 թվականը հայտարարում էր «յուրեղիմական տարի» և հրահանգում, որ «Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում հանդիսավոր, սրբազան արարողություններով ոգեկոչվի հիշատակը ս. Էջմիածնում տպարանի հիմնադրության երկուհարյուրամյակի, նրա երջանկահիշատակ հիմնադիր Երևանցի Սիմեոն կաթողիկոսի, քարեպաշտ քարերարների և Մայր Աթոռի գործակից միաբանների»¹:

Սիմեոն Երևանցու օրով, 1771 թվականին, ս. Էջմիածնում, Հայոց աշխարհում, հայատառ առաջին տպարանի հաստատումը, տպարան, որը կանոնավորապես սկսում էր գործել 1772 թվականին, որպես հայ ժողովրդի հոգևոր լուսավորության և ազգային-մշակութային զարթոնքի հիմնական ազդակներից մեկը, հանդիսանում էր մեծ երևույթ ժԸ դարի մեր ժողովրդի պատմության մեջ:

Գուտենբերգյան մեծ գյուտից հետո, ժԵ դարի 60-ական թվականներին, երբ տպագրության արվեստը տարածվում էր Եվրոպայում ու վայելում էր պետական հովանավորություն ու պաշտպանություն, հայ ժողովրդը առաջիններից մեկն էր հանդիսանում, որ այդ գյուտից շուրջ 50 տարիներ հետո, 1512 թվականին, տիրանում էր տպագրական արվեստի հրաշալիքին՝ սկիզբ դնելով հայ կյանքում տպագրությանը:

Հայ տպագրությունը ս. սահակ-մեսրոպյան հոգևոր-մշակութային ու հայրենասիրական, ազգային, ինքնապահպանության հրաշքի շարունակությունն էր՝ մեսրոպատառ տպագրված հայ գրի ու գրականության միջոցով:

«Հայ որոնող միտքը ձգտում է դեպի Գուտենբերգի հրաշագործ գյուտը, տիրանում է նրան, այնպիսի մի եղանակով, որ հրաշքի նման մի բան է թվում և հիացնում դիտողին՝ դնելով նրա առջև հայ ժողովրդի մակասագրի ամենահուզիչ և ամենահուսատու երկություններից մեկը:

Այսպիսով հայերը առաջավոր էին հանդիսանում ոչ միայն իրենց շրջապատող բոլոր ազգերից, այլև մի բանի քաղաքակիրթ երկրների վերաբերմամբ»²:

Հայերի առաջին տպագիր գիրքը «Հայաս-

¹ «Էջմիածին» ամսագիր, 1972, փետրվար, էջ 4-5:

² Լեո, Հայոց պատմություն, հատ. Գ, Երևան, 1946, էջ 224—225:

տանը շրջապատող արևելյան ժողովուրդների առաջին գործերից հարյուրամյակների ավագություն ունի:

Խորհրդային բազմազգ Միության ժողովուրդների շարքում հայերին է պատկանում հնագույն տպագրության պատիվը³:

անսպառ ջանքեր գործ դնում, նախ՝ Եվրոպայում տպարաններ պահելու և ապա, վերջի վերջո, ամբողջ հայկական մասշտաբով վերցրած, առաջին անգամ Գոտենբերգի գյուտը Էջմիածնում հաստատելու⁴:

Հայոց Հայրապետները հայ տպագրության



Միսենոն Երևանցու՝ Մայր Աթոռում հիմնած տպարանի արձանագրությունը

ԺԶ դարում մեր երկրում տիրող քաղաքական-տնտեսական ծանր պայմանների բերումով, երբ քաղաքականապես և մշակութապես խողովակվում էր մեր ժողովուրդը, և «մի մեծ մուսլ»՝ Աստուծո՛ւ էր մեր հոգևոր ու մտավոր կյանքի վրա, որը «աղետալի հետևանքներ» է ունենում «մեր ժողովրդի համար, ավելի ևս չարաչար, քան արաբական, սելջուկյան ու թաթարական բռնատիրությունները»⁵, հայերեն առաջին տպարանները բացվում էին հայրենիքից հեռու, գաղթօջախներում, ս. Էջմիածնի հովանավորությամբ և նախաձեռնությամբ: «Հայերեն տպագրությունները ներմուծվում էին Հայաստան, իբրև դրսի ապրանք»⁶:

Պատմական այս դժբախտ կացության և «տիրող այդ խավարի մեջ անգամ այնուամենայնիվ դարձյալ ս. Էջմիածնի կաթողիկոսներն ու միաբանության անդամներն են

սկզբնավորությունից հետո տպագրական գործի կարևորության գիտակցությունը ունենալով ցանկացել են Մայր Աթոռում, բուն հայրենի հողի վրա, բացել տպարան, եկեղեցու և հայ ժողովրդի հոգևոր ու մտավոր «նորոգութեան» համար:

Մայր Աթոռում տպարան հիմնելու բուն ցանկությամբ շնորհակալ աշխատանքներ են կատարել Միքայել Ա Սեբաստացի (1567—1576), Սրսպիոն Եղեռացի (1601—1603), Փիլիպպոս Աղբակեցի (1632—1655), Հակոբ Զուղայեցի (1655—1680) կաթողիկոսները: «Այս ողորությամբ գործադրված ճիգերը 17-րդ դարի հայկական առաջադիմական շարժման պանծալի էջերն են կազմում»⁷:

Մայր Աթոռում տպարան հաստատելը կաթողիկոսների և միաբանների երազանքն էր:

³ Հայ գիրքը 1801—1850 թվականներից, Երևան, 1967, էջ IV:

⁴ Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, էջ 349:

⁵ Առ, Առյւն տեղ, էջ 488:

⁶ Արտակ եպիսկոպոս Սմբատյանց, Սուրբ Էջմիածնի միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, «Էջմիածին» ամսագիր, 1972, ապրիլ, էջ 26—27:

⁷ Առ, Նույն տեղ, էջ 489:

Ա. Էջմիածնում, հայրենի հողի վրա, առաջին հայ տպարանի հաստատումը պատմականորեն կապվում է Սիմեոն Ա Երևանցի մեծագործ կաթողիկոսի անվան ու գործունեության հետ:

Սիմեոն Երևանցին ԺԸ դարի երկրորդ կեսի մեր ինքնատիպ ու արդյունաշատ Հայրապետներից մեկն է, որի գործունեությունը ընդգրկել է Հայկազանց ընդարձակ հորիզոններ, որպես Մայր Աթոռի միաբան, նվիրակ, ուսուցիչ, բարոգիչ, կրթական մշակ, շինարար, եկեղեցական բարեկարգիչ և Հայրապետ Ամենայն Հայոց:

Երևանցին իր եկեղեցական, մատենագրական, հայրենասիրական, շինարարական, բարոգչական լուսամիտ և արդյունաշատ գործունեությամբ, իր առաքինազարդ ու անբասիր կենցաղով, ա. Էջմիածնի հանդես ունեցած իր պաշտամունքով ու իր «սիրելի ազգի» համար տաժաժ մեծ սիրով հանդիսացավ «ամենախոշոր անձնավորությունը ԺԸ դարի հայ լուսավորչական հոգևորականության մեջ»⁸:

Երևանցու ծննդյան թվականը մոտավորապես համարվում է 1710 թվականը: Ծնվել է Երևանի քաղաքամիջում: Ծնողները եղել են Կարապետը և Գայանեն: Ունեցել է երեք եղբայրներ:

Երևանցին իր նախնական կրթությունը ստացել է Մայր Աթոռի դպրոցում՝ աշակերտելով ժամանակի հայտնի աստվածաբան Հովսեփ վարդապետին և գիտնական Հակոբ Շամախեցուն (ապա կաթողիկոս 1753—1768): Սիմեոնը աչքի է ընկել ուսանողության տարիներին իր բացառիկ ուշիմությամբ և մտավոր ընդունակություններով⁹:


Մայր Աթոռի դպրոցում Երևանցին հմտանում է ա. Գրոց «սերտողութեան», մեկնության, աստվածաբանության, փիլիսոփայության, հայագիտության, բեմբասացության, երաժշտության և արտաքին գիտությունների մեջ¹⁰:

«Սա ի սարկառագութեանէ անտի որքան լթոռս գտանիր, ոչ դադարիր ի դաս առելոյ մինչև ի կաթողիկոսութեանն ես»¹¹:

Մայր Աթոռում Երևանցուն աշակերտում են շատերը: Նա հասցրել է «բազում որդիս օրհնածինս և զաշակերտս շնորհակալս... ի

պաշտառութիւնս սրբոյ Աթոռոյս և ի հոգևոր ճոխութիւնս ազգիս հայոց»¹²:

«Առաջիկային նշանավոր հանդիսացող Մայր Աթոռ միաբաններ, բոլորն ալ Սիմեոնի աշակերտած և Սիմեոնով զարգացած ըլլակին պարծանքով կհիշեն»¹³:



Սիմեոն Երևանցու տպարանում գործածվող փայտյա մամուլի ստուտակը

Երևանցին Ղազար Զահկեցու (1787—1751) օրով, դեռևս Էջմիածնի սարկավագ, նվիրականության պատասխանատու պաշտոններ է կատարում Բայազետում, ապա Հրեկաստանում և Պարակաստանում մեծ արդյունավորությամբ ու հանգամանորեն ծանոթանում տիրախնամ այդ թեմերի եկեղեցական-կրթական կյանքին. «Սարկավագ Սիմեոնը անձնավորությամբ գլուխ հանեց նվիրականության գործը, բաշխելով եկեղեցիներին ա. մյուտոն, ոգևորելով հայ ժողովուրդը իր սքանչելի բարոգներով և յուր անարատ, մաքուր ու անբասիր վարքը օրինակ տալով տեղական հոգևորականներին և ժողովրդին»¹⁴:

⁸ Առ, մույն տեղ, էջ 770:

⁹ Դիան հայոց պատմության, գիրք Գ, Սիմեոն կաթողիկոսի Յիշատակարանը, կենսագրությամբ..., Թիֆլիս, 1894, էջ 48:

¹⁰ Նույն տեղ, էջ 48:

¹¹ Զամբո, Վաղարշապատ, 1873, էջ 33:

¹² Եփրեմ Զորագեղցի (ապա կաթողիկոս, 1800—1835), Յիշատակարան Սիմեոն կաթողիկոսի, «Արարատ», 1875, էջ 327, նաև՝ 1896, էջ 498:

¹³ Մաղաքիս արքևա. Օրմանյան, Ազգապատում, հար. Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 8021:

¹⁴ Դիան..., մույն տեղ, էջ 48:

Հնդկաստանի նվիրակության երեք ու կես տարիներին Երևանցի մտերմական կապ է հաստատում մանավանդ Մադրասում, տեղի բարեպաշտ, եկեղեցական ու հարուստ հայ իշխանների հետ, որոնք հետագայում մեծապես օգտակար են հանդիսանում Երե-

ղիկասական դիվանի տեսուչ: Նա է վարում Մայր Աթոռի բոլոր գրագրությունները: Երևանցի թաջահմուտ է եղել նաև գրչության արվեստին:

Այնուամենայնիվ, Երևանցին Մայր Աթոռում երկար չի մնում և անցնում է Կ. Պոլիս, ուր աշակերտում է Բաղդասար Դպրին և հրավիրվում է Կոլոտյան դպրոցում դասավանդություններ կարդալու փոխտնօրինության գծով (Պոլիսյոր-Դավիթ Անհալթ): Երևանցու «անձի մեջ, իսկապես, միանում էին արևելյան և արևմտյան դպրոցները»¹⁵:

1752 թվականին Երևանցին Հակոբ պատրիարք Նալչանի և ակննցի Հակոբ ամիրայի ընկերակցությամբ ուխտի է մեկնում Երուսաղեմ, ս. Հակոբյանց վանք, ուր իր «բաշաբարոգ ատենաբանությամբ զարմացուց Նալչան պատրիարքը, որ մինչև իսկ յուր փիլոնը, մատանին և գավազանը նվիրեց Սիմեոնին»¹⁶:

1754 թվականին Երևանցին վերադառնում է Մայր Աթոռ և եպիսկոպոս է ձեռնադրվում Ալեքսանդր Բ Բյուզանդացի կաթողիկոսից և նշանակվում Արևմտյան Հայաստանի նախակ:

1759 թվականին մա Կ. Պոլսում կաթողիկոսական ընտրության հարցում մեծ դեր է կատարում ի նպաստ իր ուսուցիչ և բարերար Հակոբ Ծամախեցու ընտրության (1753—1763) և նրա օժման հանդիսությանը ներկա գտնվելուց հետո Մայր Աթոռում, վերադառնում է Կ. Պոլիս: Երևանցին Ծամախեցու աջ բազուկն է հանդիսանում և՛ Մայր Աթոռում իր գտնված օրերին, և՛ Կ. Պոլսում, Ջմյուռնիայում իր նվիրակության տարիներին: Նվիրակության այս ժամանակահատվածը «մեծապես նպաստած է Սիմեոնի տանկահալոց գործերն ու ընթացքը ուսումնասիրելու և կատարելապես աճեցնել մանրամասնությանը հմտանալու»¹⁷:

Ծամախեցու մահից հետո ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովը 1763 թվականի ապրիլին Երևանցուն ընտրում է Ամենայն Հայոց կաթողիկոս:

Ազգային-եկեղեցական ժողովում «ամենեքին հաւանեալ ընտրեցին և ընկալան զնա և օծին կաթողիկոս»¹⁸:

Երևանցու կաթողիկոսության շրջանը եղավ ծանր, դժվարին ու տառապագին իրադարձությունների տարիներ: Նա կրեց բա-

Ս. Էջմիածնի թղթագործարանում պատրաստված թղթի դրոշմը

վանցում, նրա կաթողիկոսության տարիներին, իշխանական նվիրատվություններով օժանդակում մեծագործ Հայրապետի եկեղեցանվեր, կրթական, տպագրական և հայրենասիրական ձեռնարկներին: Այդ բարերարներից պետք է հիշել Գրիգոր Միքայելյան Խոջաջան Զաքիկեցին, որի անունը հետագայում սերտորեն կապվում է Մայր Աթոռի տպարանի և թղթի գործարանի հաստատման պատմության հետ:

Երևանցին Հնդկաստանի նվիրակությունից վերադառնում է Մայր Աթոռ Նոր Զուղայի վրայով և 1747-ին վարդապետ է ձեռնադրվում Ղազար Զահկեցու ձեռքով: Երևանցին նշանակվում է այդ օրերին կաթո-

¹⁵ Առ, նույն տեղ, էջ 957:

¹⁶ Դիւան..., էջ 2Բ: Նաև՝ Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգայապատմ, էջ 8022:

¹⁷ Նույն տեղ, էջ 8023:

¹⁸ Հ. Մ. Զաւյան, Պատմութիւն հայոց, հատ. Գ, Վենետիկ, 1786, էջ 872:



Սիմոն Երևանցի կաթողիկոսի տապանաքարը և Գալանն վանքի գավթում


գում տառապանք ու վիշտ, բայց կատարեց նաև եկեղեցաշեն, հայրենանկեր փառավոր գործեր:

Միմեոնը մինչև իր կաթողիկոսական գահ բարձրանալը «հայտնի էր իբր լավ ուսուցիչ, քարոզիչ և առհասարակ խելքով ու մեծ եռանդով օժտված մի հոգևորական: Նրա կաթողիկոսությունը տևեց 17 տարի (1763—1780), և այս համեմատաբար կարճ ժամանակաշրջանում նա ցույց տվեց այնքան բազմակողմանի, եռուն գործունեություն, որ ամենայն իրավունքով կարող է համարվել ամենախոշոր անձնավորությունը 18-րդ դարի հայ լուսավորչական հոգևորականության մեջ»¹⁹ (ընդգծումը մերն է—Ա. Հ.):

Միմեոն Երևանցին մահանում է 1780 թվականի հուլիսի 26-ին, «որ էր Վարդավաթի կիրակեմ... փոխեցաւ առ Քրիստոս յոյսն ամենեցուն» բարի և երջանիկ մահուամբ, սըրբասնեալ և երջանիկ տեղն մեր և աստուածարեալ սրբազան կաթողիկոսն, և ի յերկուշաբթի օրն՝ թաղեցաւ ի ձախակողման գաւթի սրբոյ վանիցն Գալիանէի սրբոհոյ կոսին»²⁰:

Երևանցու մահը մեծ կորուստ էր հայ եկեղեցու համար: Նրա գերեզմանի վրա այժմ կա գեղեցիկ մարմարյա տապանագիր-արձանագրություն, «կանխա իրմէ յօրինուած» հետևյալ բովանդակությամբ.

«Քրիստոս Աստուած իմ Տէր բարի,
Լուր աղէտից քոյս ծառայի.
Դու կացուցեր զիս քայս կարգի,
Ի մշակել ըզքո ալգի.
Իսկ ես անուամբ այս պաշտօնի
Գտայ ծառայ ամենայնի.
Եւ որպէս թէ զպարտաւոր մի
Փոխատուաց զիս մատնեցի.
Ոյց ետու եւ ծառայեցի,
Վարձն իմ զսուգ եւ զցաւ առի.
Այսու կենօք ողորմելի,
Ժամանակս իմ վճարեցի.
Այժմ ամօթով կամ ստաշի,
Զի ծառայել քեզ չկարացի:
Արդ, դու հաշեաց յիս քաղցրութեամբ,
Թող զյանցանս ներողութեամբ.
Ուրախացո՛ւ առ Քեզ կոչմամբ,
Եւ սիրիմեա՛ քո սուրբ տեսեամբ.
Վասն խաչիդ՝ զոր պաշտեցի,
Եւ սուրբ անուանդ՝ զոր կրեցի.
Միմէօն կաթողիկոս Երևանցի,
Ի ՌՄԻԹ թոյի եւ յուլիս 26-ի
Ի Վարդավաթ կիրակեմի»:



Տաղարան փորրիկ. ս. Էջմիածին, 1793 թ.

Միմեոն Երևանցու շինարարությունները և Մայր Աթոռի տպարանի հաստատումը

Միմեոն Երևանցին իր 17-ամյա հայրապետական գործունեությամբ, հակառակ ժամանակի դաժան և աննպաստ պայմաններին, Մայր Աթոռում կատարում է փառավոր, մեծածախս և ծավալուն բազմաթիվ շինարարություններ, որոնց իրագործումը պահանջում էր նյութական լայն միջոցներ, որոնք ձեռք եմ բերվում Երևանցու նախաձեռնությամբ հնդկահայ և արևմտահայ բարերարների սրտաբոխի և իշխանական նվիրատվություններով և Մայր Աթոռի սրտացավ նվիրակների ազնիվ աշխատանքներով, նվիրակներ, որոնք իրենց նվիրակության տարիներին կարողանում են Մայր Աթոռի և նրա արժանընտիր գահակալի հետ կապել բովանդակ հայության սիրտն ու հոգին:

Երևանցու օրով Մայր Աթոռը ապրում էր տնտեսական բարգավաճ վիճակում: «Յորում ժամանակի էր սուրբ Աթոռս շնորհօքն Աստուծոյ յի ամենայնիւք հոգևորօք և մարմնաորօք, ներքաականօք և արտաքաականօք»:

¹⁹ Առ, նույն տեղ, էջ 770:

²⁰ Միմեոն Ջորագեղցի, Յիշատակարան, «Արարատ», 1896, էջ 500:

նօք, քնոնակորք և լծկանօք և կթելի անասնօք քաղմապատիկ քան զառաջինն:

Միաբանքն շատ հանգիստ և ապահով լսանային: Յաւորս սորա (Երևանցու) ոչ պակասեցան կերպակերպ արհեստաւորք և շինարարք ի յԱթոռոյս²¹:



«Հաղափ թաղման կարգաւորաց»-ի տիտղոսաթերթը.
ս. Էջմիածին, 1777 թ.

Երևանցու օրով մեծացել էր նաև Մայր Աթոռի հեղինակությունն ու հմայքը, հաշս հարելան ժողովուրդների և տեղական իշխանությունների:

Երևանցու անձնական բարեկամ էր Վրաց Հերակլ թագավորը: Երևանի խանը, ինչպես նաև այլ մահմեդականներ հաճախ Երևանցու՝ «Հայոց մեծ խալիֆայի»՝ բարեխոսությանն էին դիմում՝ իրենց պետական, տնտեսական գործերը կարգավորելու համար:

Մահմեդականներից ոչ ոք չէր համարձակվում «հայհոյել, գանել, և տանել յերևան, քանտել և տուգանել միաբանից»²²:

Ահա այսպիսի ժամանակավոր բարեկարգաւոր արտաքին և ներքին պայմանների

մեջ Երևանցին հոգևոր, նյութական մեծ շինարարություններ է կատարում «թէ վասն հասարակութեան օգտի և թէ յատկապէս վասն սրբոյ Աթոռոյս առ ի յինել ինքեան յիշատակ հոգևոր և սուրբ Աթոռս Էջմիածին: Որպէս զի՝ ինքն յաւորս իւր վայելեաց, և յետագայ յաջորդօղքն զԱթոռս սուրբ և փոխանորդք իւր Հայրապետքն սրբազանք զայն վայելելով՝ յիշեացն զինքն ի սուրբ և ի մաքուր աղօթս իրեանց աստուածահանոյս...»²³:

«Ջամբո»-ի հրատարակիչ-խմբագիրը «Վասն Սիմեոն կաթողիկոսի» իր հավելվածի մեջ (Էջ 34—44) մասնավոր էջեր է նվիրել Երևանցու գործունեությանը ընդհանրապէս և ի մասնավոր շինարարական-վերանորոգչական ձեռնարկներին: Գլուխ քահանա Աղանյանը նույնպէս մասնավոր գրով է նվիրել Երևանցու շինարարությանը²⁴:

Թե՛ Եփրեմ Զորագեղցին, որպէս Երևանցու ժամանակակից, իր «Յիշատակարան»-ում և թե՛ «Ջամբո»-ի հրատարակիչը վկայում են, որ Երևանցին «սկիզբն արար շինութեան սրբոյ Աթոռոյս... և զբազմապիսի բարերարութիւնս սրբոյ Աթոռոյս»²⁵:

Սիմեոն Երևանցու շինարարություններից հիշատակվում են.

Մայր Աթոռի արտաքին, հնացած պարսկի վերաշինությունը՝ «ի յարտաքուստ կուսէ»՝ պաշտպանվելու համար «ի գողոց եւ յասպատակաց և յալոց սրիկայից», ձիթահանքի և մարագի, գոմերի և անասնատների, «Օշական» ամբարի կառուցումը, Ղազարապատի տանիքում «զգեղեցիկ և ընդարձակ վերնայարկս հովանոցս», ամառային կոչված սեղանատունը՝ «տաշեալ քարի», մումատունը, «զգայրոցատունսն ձմեռան և ամառան յատուկ պարսպօք և պարտիզօք», միաբանական-վանական նոր խցիկներ, Վեհարանի հարավային կողմը՝ «զգեղեցիկ դարպաս մի» և տասը նոր սենյակներ Վեհարանի կարիքների համար: Վեհարանի նորակառույց սենյակների ետև՝ հաստատուն պարիսպի կառուցումը Տրդատա Դոմից մինչև վանքի Վեհարանի նորակառույց պարիսպը, որի արևմտյան բուրգի վրա՝ ամառանոց և դիտարան դեպի Արարատյան դաշտ նայող: Վանական խցերի, Մայր տաճարի և այլ շէնքերի խոնավությունը վերաց-

²³ Եփրեմ Զորագեղցի, Յիշատակարան, «Արարատ», 1896, էջ 496:

²⁴ Դիւան..., էջ 22—ԳԻ: Նաև՝ Մ. արքեպ. Օրմանյան, Ազգապատում, էջ 3049:

²⁵ Եփրեմ Զորագեղցի, նույն տեղ, էջ 496: Նաև՝ Ջամբո, էջ 34:

²¹ Ջամբո, էջ 34:

²² Նույն տեղ, էջ 34—36:

նելու համար ջուր է հանում ներսի պարբերական և այն միացնում «Քանքան» կոչված աղբյուրին՝ անցկացնելով այն եկեղեցու չորս կողմով և միաբանների խուցերի և այլ շինությունների առաջով: Կառուցում է բաղնիք միաբանության և գյուղի բնակչության համար:

Երևանցիներ անորոշություններ է կատարում նաև Մայր տաճարի վրա. «Երևանորոգեալ շինեաց նոր ի նորոյ նաև զբոլոր տանիսն սրբոյ և աստուածակերտի տաճարիս գեղեցիկ և տաշեալ բարիք»: Նորոգում է Մայր տաճարի ներսում չորս հաստատահիմն և բարձր սյուները «մինչև ի վերին կամարն»: Վանքի արևելյան մասում գտնվող Քարվանսարա-շուկան հետացնում է վանքից, Հին Վաղարշապատի գյուղը, որը «կից եւ անմիջանց վայրօք խառնիխտուն շինուածովք շրջափակեալ էր սուրբ Աթոռովս», քանդելով տները հետացնում է «զգեօղն ի ճորակերտ պարսպէն սրբոյ Աթոռոյս՝ յապահովութիւն նմին» և նոր տներ է շինում և կառուցում գյուղի նոր եկեղեցին «լայն և ընդարձակ» ս. Աստվածածին անունով «խրով արդիամբքն»:

Երևանցիներ գբաղվում է նաև Մայր Աթոռի այգիների, պարտեզների, բանջարանոցների ընդարձակումով և պարսպապատումով, «շինեաց մեծ և ընդարձակ հնձան, բազմացոյց եւս վասն սրբոյ Աթոռոյս զմլքատու գիւղօրայս»:

«Աթոռին կալված գյուղերուն պաշտպանության և հաստիքաբերության ալ մոտադրություն դարձուց»²⁶ և բազում բռնագրաված հայկական վանքապատկան գյուղեր ազատում է և տարագրված հայ գյուղացիներին վերադարձնում իրենց հողերը. «Հանել ետ անտի գմուղանուն և գհայս դարձուցեալ անդ՝ վերստին արար հայաբնակ»:

Երևանցիներ անորոշություններ է կատարում նաև Երևանի եկեղեցիներում, անորոգում է Օշականի կամուրջը, որը կառուցել էր տվել Նահապետ կաթողիկոսը:

Երևանցիներ «ս. Աթոռը պայծառացրեց մեծագին հիշատակներով, պատվական սպասներով, զգեստներով... թուր ազգը կապեց Մայր Աթոռի հետ և սիրել տալով նորան՝ ամեն կողմից բարիքներ էր որ տեղում էր ս. Էջմիածին»²⁷:

Հնարավոր չէ այստեղ հիշատակել Երևանցու կատարած բոլոր շինարարություններն ու վերանորոգությունները: Այստեղ հիշատակվածները, սակայն, բավական են՝ ցույց տալու մեծագործ Հայրապետի շինարարական ձեռնարկների թափն ու կշիռը: Երե-

վանցու շինարարական գործունեության մասին ամբողջական ու լրիվ գաղափար կազմելու համար կարող էինք վրիժվել. Ջորագեղցու «Յիշատակարան»-ը, «Արարատ», 1896, էջ 496. «Ջամբու», «Վասն Սիմեոն կաթողիկոսին», էջ 33—44. «Իիւան», էջ 22—194. Մաղ. արքեպ. Օրմանյան, «Ազգապատում», էջ 3049—3050:

Սիմեոն Երևանցու շինարարական գործունեության փաստապատկեր հանդիսացավ, սակայն, Մայր Աթոռում և հայրենի հողի վրա, հայերեն առաջին տպարանի հաստատումը 1771 թվականին:

ԺԶ—ԺԸ դարերում մեր երկրում տիրող քաղաքական, տնտեսական անհպաստ պայմանների բերումով, հայերեն առաջին տպարանները բացվում էին հայրենիքից հեռու, հայկական գաղթօջախներում, ս. Էջմիածնի գաղականների և միաբանների նախաձեռնությամբ և հովանավորությամբ:

Գաղթօջախներում հաստատված առաջին հայ տպարաններից շատերը կոչվում էին «Ս. Էջմիածնի» կամ «Ս. Գրիգոր Լուսավորչի» տպարաններ:

«Էջմիածնի գաղականներ քանի-քանի անգամներ թե՛ նախաձեռնարկ և թե՛ օժանդակող եղան տպարանական հաստատությանը: Անոնք ստիպված էին տպարանները Արևմուտքի քաղաքներում՝ Վենետիկի, Լիվոռնոյի, Ամստերդամի, Մարսիլիայի և մույնիսկ Արևելքի քաղաքներին Կ. Պոլսի և Սպահանի մեջ բանալ տալ և ոչ Վաղարշապատի»²⁸:

Այնուամենայնիվ Սիմեոն Երևանցուց առաջ բազում կաթողիկոսների ջերմ ցանկությունն է եղել Մայր Աթոռում բանալ հայկական տպարան:

Մայր Աթոռի գաղականների այդ մտածած, քայց չիրագործած իդճը, որը փոխանցվում էր հաջորդ կաթողիկոսներին որպես պատգամ և հրամանգ իրագործեց Սիմեոն Երևանցին և «հաստատեաց զտպագրատուն ի սուրբ Աթոռոջս, ի հիսիսակողմն հայրապետարանի»²⁹: «Եւ զտպագրատուն ևս հաստատիցէ յԱթոռոջս, զոր և հաստատեաց իսկ լաջողմամբ Աստուծոյ ի ՌՄԺԹ թուղջն մերում»³⁰:

Հայ տպագրությունը 260 տարի զալթօջախներում «պանդուխտ» մնալուց հետո՝ 1512—1772, վերջապես հայրենադարձվում է հայոց աշխարհ:

Երևանցիներ իր սարկավագության օրից իսկ մտածել է Մայր Աթոռում տպարան բացելու մասին:

«Էջմիածնի Մայր Աթոռին մեջ տպարան

²⁶ Մ. արքեպ. Օրմանյան, նույն տեղ, էջ 3050:

²⁷ Իիւան..., էջ 194:

²⁸ Մ. արքեպ. Օրմանյան, նույն տեղ, էջ 3098:

²⁹ Եփրեմ Ջորագեղցի, նույն տեղ, էջ 497:

³⁰ Ջամբու, էջ 43—44:

գոյություն չունեցավ մինչև Սիմեոնի ժամանակը: Այդ փառազր Սիմեոնի միտքը կաթողիկոսանալին ետքը շնագեցավ և ոչ ալ իբր հայրապետական մեծագործության նշանակեցող, որովհետև նա այդ միտքը հղացած էր երբ կաթողիկոսանալին 20 տարի առաջ, տակավին սարկավազ Հնդկաստանի նվիրակությունը կկատարեր»³¹:



«Պարտավճար» գրքի տիտղոսաթերթը. ս. Էջմիածին, 1779 թ.

Երևանցին Մայր Աթոռում տպարան բացելու միտքը ներշնչել էր Մադրասում բնակվող ջուդայեցի մեծահարուստ վաճառական Գրիգոր Միքայելյան Խոջաջան Չափկենցին, որը սիրով հանձն էր առել իշխանաբար հոգալ բոլոր ծախսերը՝ «ի յիշատակ իրեան և իր ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն»:

1765 թվականից սկսած Երևանցին գործնականապես և վճարակալորեն զբաղվում է տպարանի հաստատման նախապատրաստական համար աշխատանքներով³²:

Վերջապես, երկարատև ու լուսնոգին

աշխատանքներից հետո, 1771 թվականին, Սիմեոն կաթողիկոսին հաջողվում է հայրենի հողի վրա, Մայր Աթոռում, հաստատել տպարան: Երևանցին հանդիսանում է Հայաստանյան տպագրության նախահայրը:

Այս գործում Երևանցուն մեծապես օգնում են Մայր Աթոռի բազում միաբաններ, որոնց թվում էրաթյունն էլս. Էջմիածնացին՝ որպես փորագրող և քանդակող, և Մկրտիչ էլս. Շոռթեցին, որ «նախկին հեղինակ եղև ստ փորագրությունն»³³: «Եվ սա սպացույց է տպագրական գործի կարևորության նշանակություն տալուն և միաբանների միահամուռ ուժերով գործի հաջողությանը նվիրված լինելուն»: Մայր Աթոռի շնորհալի միաբաններն էին, որ պատրաստում էին տպագրական տառերը, զարդագրերը, քաջել էին ձուլարան: Նրանք էին միաժամանակ առաջին գրաշարները, սրբագրիչները, տպագրիչները ու կազմարարները: «Այսպիսով սկիզբն դրվեցավ Հայաստանի հողի վերա գրքերի տպագրության»³⁴: Դա ժամանակի աննպաստ պայմաններում արդարև «հայրապետական մեծագործություն էր»³⁵, փառավոր մի գործ, «որի նմանը մինչև այդ Էջմիածնում չէր եղել»³⁶:

Տպարանը հաստատվում է ձմեռային Վեհարանի արևմտյան ծայրին կից գտնված շինության մեջ, որի ճակատին դրվում է հետևյալ արձանագրությունը.

Աստուծով հաստատեցաւ տպագրատունս
նոր ի նորոյ ի տուր Աթոռս Էջմիածին, ամենայն պարագայիսն հոգաբարձութեամբ
Տեառն Սիմեոն սրբազան կաթողիկոսին Երեւանցոյ, արդեամբ Զուդայեցի ի Հինդ բնակեալ քարեպաշտօն Գրիգոր աղային Խոջաջանեան, որ մականուամբ Չափկենց կոչի ի յիշատակ իրեան եւ իր ի Քրիստոս հանգուցեալ ծնողացն՝ Միքայելին և Մամախարունին, իւր կենակից Մալտինային և վաղաթառամ Միքայել որդւոյն և քերցն Անամարիային և Զիպիտային, հօրեղբարցն՝ Եղիազարին, Սաֆարին և Աղէքսանդրին պապուն՝ Գրիգորին և կենակից Թագուհոյն և հօրաքեռն Զիծաղատային և մեծ պապ Յակոբջանին և հօրեղբօր դստերացն՝ Պէկզադային և Գիվմարաթին, և այլ ամենայն հին և նոր մեջեցելոցն նորին: Այսու պայմանաւ՝

³³ Տոնացոյց, Էջմիածին, 1774, Յիշատակարան: Տես նաև Ա. Երիցյան, Պատմություն հայ տպագրության, Տփղիս, 1879, էջ 25:

³⁴ Դիւան..., էջ ԾԿԲԾ:

³⁵ Մ. արքեպ. Օրմանյան, նույն տեղ, էջ 3089:

³⁶ Արտակ եպիսկոպոս Սմբատյանց, Ս. Էջմիածին միաբանության գրական-կրթական գործունեությունը և Մայր Աթոռի տպարանը, «Էջմիածին» ամսագիր, 1972, հունիս, էջ 49:

³¹ Մ. արքեպ. Օրմանյան, նույն տեղ, էջ 3089:

³² Դիւան..., էջ ԾԾԸ:

զի ի տարին Բ անգամ ի տօնի Լուսաւորչին և հրեշտակապետացն ի սուրբ Աթոռոջս պատարագ մատչիցի հանդիսաւորութեամբ՝ յիշելով զնոսա, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի, ամէն. թ. ՌՄԻ (յամի 1771):

Մայր Աթոռի նորահաստատ տպարանում առաջինը տպագրվում է Սաղմոսը 1771 թվին. «Յորում և ետ տպել նախապէս զՍաղմոս»³⁷: Դժբախտաբար, սակայն, Սաղմոսի տպագրությունը «անհաջող է անցնում»³⁸:

Մայր Աթոռի տպարանը կանոնավորությամբ սկսում է գործել 1772 թվականից:

Սակայն տպագրական գործի արագ կերպով զարգացումը խանգարող մի ուրիշ անկատար հանգամանք ևս կար: Դա տպագրական թղթի պակասն էր: Տպագրության համար անհրաժեշտ թուղթը բերվում էր Եվրոպայից մեծ դժվարություններով:

«Որում տպարանի թէպէտ եւ յոլովք ձախորդութիւնք ընդդիմացեալք յամեցուցին, այսինքն՝ պակասութիւնք հարկաւոր պիտոյիցն ըստ նմին, զորս ի յաղթատ վայրոջս ոչ գտանելով, ի հեռուստ դժուարութեամբ առնեոն բերեմք: Նաև խառնակութիւնք կողմանցս յանդիմանեալք, որք և զսուրբ Աթոռս և զմեզ խռովեն և անհանգիստ առնեն... մինչև անդոյս յինել մեզ և ի կենաց»³⁹:

Արխիսիրտ Հայրապետը հաղթահարում է բոլոր դժվարությունները, և նրա գործնական միտքը լուծում է ամենայն հաջողությամբ նաև թղթի հարցը: Մայր Աթոռում նա հաստատում է նաև թղթի գործարան, 1776 թվականին, Գրիգոր աղա Խոջաջան Չաքիկենցի բարերարությամբ⁴⁰:

Տպարանի հիմնադրումը և թղթի գործարանի հաստատումը Մայր Աթոռում «հրաշք էր Հայաստանի հողի վրա, պարսից բռնապետության տակ» (Լեո, նույն տեղ, էջ 959):

«Այստեղ արդեն լիովի արտահայտվում էր Սիմեոն կաթողիկոսի խիզախ, ձեռնարկող ոգին, կամքի ուժը, վառ սերը դեպի կուլտուրական հիմնարկությունները», քայց Երեվանցին «մեծակ իր սեփական միջոցներով չէր կարող հաջողեցնել այսպիսի ելրոպական ձեռնարկություններ Էջմիածնի պա-

րիսպների մեջ, եթե նրան ետանդագին աշակցություն ցույց չտար հայ վաճառականությունը, մանավանդ ջողայեցի խոջաները»⁴¹:

Մայր Աթոռի թղթագործարանում շինված տպագրական թղթի վրա «չբանկար փակագիրներ կային, Ս. Կ. և Գ. Մ., որոնք Սիմեոն կաթողիկոսի և Գրիգոր Միքայելյան Չաքիկյանի անունները կարտահայտեին» և «թղթաշինության գործարանի կառուցման հայկական թվականը ՌՄԻԵ (1776)»⁴²:

Սիմեոն Երևանցու օրով, 1772—1780 թթ., Մայր Աթոռի տպարանից լույս են տեսել հիմնականում նրա գրչին պատկանող 6 արժեքավոր աշխատություններ, որոնց մասին կիսովի ստորև⁴³:

Սիմեոն Երևանցու մատենագրական վաստակը և հայրենասիրական գործունեությունը

ԺԸ դարը և նրա երկրորդ կեսը մեր մտավոր շարժման զարգացման ժամանակաշրջանն է նաև գրականության բնագավառում:

Այս շրջանում տպագրության զարգացման շնորհիվ գրական երկերն այնքան են շատանում, որոնց մասին «հասկացողություն անգամ չէին կարող ունենալ նախընթաց բոլոր դարերը»⁴⁴:

Եթե ԺԸ դարում տպագրվել են 167 գիրք, ապա ԺԸ դարում՝ 781 գիրք⁴⁵:

ԺԸ դարում էլ մեր մտավոր զարգացման կենտրոններ հանդիսանում էին դարձյալ վանքերը, և գրականությունը մշակվում, զարգանում և պահպանվում էր հոգևորականության միջոցով: Հոգևորականությունն էր, որ կազմում էր մտավորականությունը, «որի ձեռքում էին գտնվում գրականությունն ու դաստիարակությունը»: ԺԸ դարում էլ «ընդհանրապես վաճակալն ուղղություն է տիրապետում հայ մտքի ասպարեզում, ինչպես եղել էր և առաջ»⁴⁶:

ԺԸ դարի մեր եկեղեցական ու մտավոր գործունեի հիմնական օջախներից մեկն է հանդիսանում Մայր Աթոռը, «սուրբ և աստուածային, քրիստոսակերտ և լուսանկար ա-

³⁷ Չամբո, էջ 44:

³⁸ Գաբրիել Լեոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 149: Տես նաև Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ, 1512—1800, Երևան, 1968, էջ 153:

³⁹ Ատենի ժամագիրք, Էջմիածին, 1785, Յիշատակարան:

⁴⁰ Դիւան..., էջ ԺԿԲ: Մ. արքեպ. Օրմանյան, Ազգապատում, էջ 3101: Արտակ եպս. Մմբաւոյանց, նույն աշխատությունը, «Էջմիածին», 1972, Ռուլիս, էջ 37—42:

⁴¹ Լեո, նույն տեղ, էջ 772:

⁴² Դիւան..., էջ ԺԿԶ: Մ. արքեպ. Օրմանյան, Ազգապատում, էջ 3101: Արտակ եպս. Մմբաւոյանց, նույն աշխատությունը, «Էջմիածին» ամսագիր, 1972, Ռուլիս, էջ 47:

⁴³ Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512—1800), էջ 156, 158, 164, 176:

⁴⁴ Լեո, նույն տեղ, էջ 927:

⁴⁵ Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ, 1512—1800, էջ 9—50 և 51—227:

⁴⁶ Լեո, նույն տեղ, էջ 935:

մեկից հայոց Աթոռոյս Էջմիածին»⁴⁷, որ դաստիարակվում և պատրաստվում էին այդ զարթոնքի մեծ ներկայացուցիչները, որոնցից մեկն էր Սիմեոն Երևանցին, «սնեալ և վարժեալ ի մանկութենէ ի ծոց սրբոյ Աթոռոյս»⁴⁸:

Երևանցին թողել է քաղմածանր և հարուստ մատենագրական վաստակ: «Ծուանդուն կաթողիկոսին միայն վարչական գործերը չէին զբաղեցնում: Նա գրասեր և կրթասեր մարդ էր և շատ էր աշխատում դարձնել Էջմիածինը նաև մի մտավոր կենտրոն»⁴⁹:

«Կաթողիկոսության ժամանակ աշխատեց Էջմիածինը դարձնել լուսավորության կենտրոն և կապեց ամեն տեղ ցրված հայերի հետ»⁵⁰:

Ժամանակակիցները և Երևանցու «շնորհընկալ» և «օրհնածին» աշակերտները մեծ գովեստով են խոսել նաև Երևանցու մատենագրական վաստակի մասին՝ նրան անվանելով «քաջ գիտնականն բանիքուն... և գերիմաստ վարդապետն... քանզի նախ ի վարդապետութեան իրում արար զԳիրս Լուծմանց... արտաքննցն գրոց»⁵¹:

Երևանցու մատենագրական վաստակի գաղափարական բովանդակությունը Էջմիածնասիրությունն է և հայրենասիրությունը:

Սիմեոն Երևանցին «էր այդ շնորհնկալ, ստատամիտ, գիտնաշատ, լի իմաստութեամբ, լաւապէս տեղեակ Հին և Նոր Կտակարանաց, վարժ նրբից և արտաքին գրոց... վարժ բանաստեղծութեան արհեստից և համեղարան ի շարադրութիւնս» («Զամբո», էջ 33):

Երևանցու գրչին են պատկանում հետևյալ գործերը.

1. **Գիրք Աղօթից**, որ կոչի Զքօսարան հոգեւոր, տպագրված Էջմիածին, տպ. ս. Գրիգոր Լուսատրչի 1772 թվականին, 184 էջ:

2. **Տաղարան փոքրիկ**, Էջմիածին, տպ. ս. Գրիգոր Լուսատրչի, 1772:

3. **Տօնացոյց**, նախապէս կարգեալ և սահմանեալ սրբոյն Սահակայ Պարթևի Հայրապետին Հայոց, ըստ ստանդութեան Հայոց, Սրբոյ եկեղեցւոյ... արդէն վերստին նորոգմամբ ի յերկուս հատորս բաժանեցեալ, աշխատասիրութեամբ տեսած Սիմեոնի յօգնւածն եւ սրբազան կաթողիկոսին Ամենայն

Հայոց, հոր. Ա.—Բ, Էջմիածին, տպ. ս. Գրիգոր Լուսատրչի, 1774 (—1775), 564 էջ:

Երևանցին նաև մեծ տոմարագետ էր: Նա զբաղվեց մեր եկեղեցական տոմարի բարեկարգությամբ⁵² և եղալ վերջին բարեկարգիչը մեր եկեղեցական տոմարի. «պարզաբանեաց և զհին տօմարն հայոց և զնոր և անշարժ տօմար ևս արար»⁵³:

«Այլ և վերանորոգմամբ կանոնադրեաց զՏօնացոյցս մեր երկրքումք հատորօք ի վերայ ԼԶ գրոցն մերոյ՝ անշարժ և մշտնջենաւոր ընթերցմամբ»⁵⁴:

Երևանցին «հինգ ամ» աշխատել է և տըքնել «Տօնացոյցի վրա», «զի զարհեստս այս ի ձեռն բերցուք»:

Տօնացոյցի տպագրությունը համարվում է Մայր Աթոռի տպարանի լավագույն հրատարակություններից մեկը, «հասուն և կատարեալ» գործ⁵⁵: «Սակայն Սիմեոնի Տօնացոյցը տպագրութենէն ավելի, յոր կազմությամբը հատուկ մտադրության առարկա մըն է... հույժ գնահատելի և օգտակար գործ մըն է...»⁵⁶:

Երևանցու «Տօնացոյց»-ի տպագրությունը հետապնդում էր եկեղեցական և հայրենասիրական նպատակներ: Դրանով նա առաջըն առալ վեներտիկի միաբանների կողմից տպված և պրոպագանդիստական նպատակով մեր ժողովրդի մեջ ձրի կերպով տարածված կաթոլիկ «Լուսնացոյց»-ի (1757) և «Օրացոյց»-ի (1758): Երևանցին վեներտիկյան այդ հրատարակությունները արդարորեն անվանում էր «թունացոյց» և խստիվ հրահանգում՝ «թունացոյցն այն անհետ առնել և խոտել իսպառ... ուրացեալք զեկեղեցիս և զազգս մեր՝ յորս ծնեալք են, սնեալք են, յարին յայլ ազգս Բրիստոնեից»:

Սույն հոդվածի ծրագրից դուրս է խոսել սիմեոնյան նշանավոր «Տօնացոյց»-ի՝ մեր եկեղեցու համար ունեցած պատմական, տոմարագիտական, ծիսական և տոնական կրեպորության մասին:

4. **Կարգ թաղման Հայրապետաց, եպիսկոպոսաց և քահանայից**, խմբ. և հրատ. Սիմեոն Երևանցի, Էջմիածին, տպ. ս. Գրիգոր Լուսատրչի, 1777, 160 էջ:

5. **Տաղարան փոքրիկ**, շարահիսեցեալ ի Սիմեոնէ սրբազան կաթողիկոսէ հայոց յայլ և այլ ժամանակս... Էջմիածին, տպ. ս. Գրիգոր Լուսատրչի, 1777:

Երևանցին իր ժամանակի աչքի ընկնող

⁴⁷ Զամբո, էջ 8:

⁴⁸ Նույն տեղ, էջ 82:

⁴⁹ Լեւոն, նույն տեղ, էջ 771:

⁵⁰ Լ. Անադյան, Հայոց անձնանունների քառարան, հոր. Դ, Երևան, 1948, էջ 518:

⁵¹ Եփրեմ Զորագեղցի, նույն տեղ, էջ 496:

⁵² Լեւոն, նույն տեղ, էջ 770:

⁵³ Եփրեմ Զորագեղցի, նույն տեղ, էջ 496:

⁵⁴ Զամբո, էջ 84:

⁵⁵ Տօնացոյց... 1774, էջ 564:

⁵⁶ Մ. արքեպ. Օրմանյան, նույն տեղ, էջ 3101—3106:

քանաստեղծներից մեկն էր. նրա քանաստեղծական վաստակը ամփոփված է «Գիրք աղօթից» և այս փոքրիկ, բայց արժեքավոր տետրակում:

Սիմեոնյան «Տաղարան»-ի մասին Լեոն գրում է, որ Երևանցին «հարազատ ներկայացուցիչն է Արարատյան ջերմոտ հայրենասիրության... նա երգել է եկեղեցական տոներ և կրոնական պաշտամունքներ, բայց նրա ոգևորությունը առանձին թափ է ստանում այն ժամանակ երբ երգի կրոնական առարկան կապ ունի Արարատյան երկրի հետ... Որքան է տանջվում Երևանցին հայ ժողովրդի կրած անհուն տառապանքից: Եվ ահա նա իր ամբողջ սիրտը, հուսահատական պաղատանքը դնում է մի երգի մեջ, որ ստացել է անագին ժողովրդականություն, որովհետև խոսում է հայ ժողովրդի սրտից և զգացմունքից...

Սիմեոն Երևանցին հորինեց մի երգ, որ պիտի երգվեր «Տէր, ողորմեա»-ի հետ: Եկեղեցու մեջ, պատարագի վերջում, երբ ամբողջ ժողովուրդը ձնկաչոք հառաչում էր... Դա «Արի Աստուած»-ն է.

«Արի՛, Աստուած հարցրն մերոց,
Որ ապաւե՛նդ ես նեղեղոց...

Հաս յօգնութիւն ծառայից քոց,
Անօգնական ազգիս հայոց...

Տէր, ողորմեա, Տէր ողորմեա...»:

Հայ ժողովրդի դարավոր տառապանքները, դարավոր արտասուքներն են լալահառաչ և պաղատագին խոսում այս համետտ և պարզ երգի յուրաքանչյուր տողից⁵⁷:


Յ. Գիրք որ կոչի Պարտավճար... վշտակօծ և ցաակիր կաթողիկոսի, մեծագործ և յօգներախոտ Հայրապետ Երևանցոյ, Էջմիածին, տպ. ս. Գրիգոր Լուսաօրչի, 1779 (—1788), 388 էջ:

«Պարտավճար»-ը Երևանցու մեծարժեք ստեղծագործություններից մեկն է իր բովանդակությամբ, ջերմ ու սրտատույ հայրենասիրությամբ և ս. Էջմիածնի հանդեպ իր ունեցած սիրո խորությամբ:

Երևանցու համար «մի ամբողջ պաշտամունք էր Էջմիածինն իբրև արարողական հայրենասիրության մարմնացում, որ միաժամանակ մարմնավորում էր և ամբողջ հայոց ազգի գաղափարը»⁵⁸:

Երևանցին, որպես Ամենայն Հայոց կաթողիկոս, Օնորհալու նման ցանկանում էր այցելել աշխարհով մեկ ցրված իր «հօտին», մտնել ամեն տուն ու երդիկ, խրատել, հուսադրել. «Բերան ընդ քերան խօսել» իր ժամանակի մեծ ցավի և մտահոգությունների մասին, բայց «վասն ժամանակի վշտաց և դառ-

նութեան», չկարողանալով այդ իղձը իրագործել, Օնորհալու նման իր «սիրելի հայ ազգի» հանդեպ ունեցած իր «պարտքը վճարում է» «ի ձեռն գրոց», շարադրելով «Պարտավճար»-ը:



Զամբո, Վաղարշապատ, 1873 թ.

«Պարտավճար»-ը նվիրված է, ժամանակի թելադրանքով, հայ եկեղեցու դավանության և անկախության պաշտպանությանը, Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ:

Հայոց աշխարհը քաղաքականորեն մեծ արհալիրքների և տառապանքների մեջ էր գտնվում: Բոլորովեցին դարձյալ հին դավանական վեճերը հայ եկեղեցու և կաթողիկոսի միջև:

Երևանցին գտնում էր, որ, որպես Ամենայն Հայոց կաթողիկոս, իրեն է վերապահված հայրենի եկեղեցու հավատո ուղղափառության և ինքնուրույնության պաշտպանությունը:

Ահա այս նպատակով «Պարտավճար»-ի առաջին մասում Երևանցին ջերմ սիրով ու

⁵⁷ Լեոն, նույն. տեղ. էջ 1059—1060:

⁵⁸ Նույն տեղ. էջ 1060:

արդար կրքոտությամբ, աստվածաբանական խորը հմտությամբ պաշտպանում է հայ եկեղեցու դավանաբանական դիրքը՝ փաստելով, որ «միմիայն միաբնակությունն է ամենատղալիս դավանությունը»⁵⁵: «Պարտավճար»-ի երկրորդ մասում Երևանցի կաթողիկոսների դեմ որպես պայքարի «հզոր միջոց առաջ է քաշում ազգային զգացմունքը: Միմեոնը, իբրև Արարատյան երկրի բնակիչ, ներկայացնում է արարատյան հայրենասիրությունը... Հայ երկրի սիրտը կազմող Արարատյան երկրի շուկը, որ հայության շուկն է եղել դարերի ընթացքում, Միմեոնի համար մարմնավորվում էր Էջմիածնի, իբրև ընդհանուր հայությունը միացնող մի նվիրական կենտրոնի մեջ: Էջմիածինը մի պաշտամունք էր նրա համար և նա ուզում էր, որ ճիշտ այդպիսի պաշտամունք Մայր Աթոռը դառնա և ամբողջ հայության համար: Այն ժամանակ այդ համազգային պաշտամունքի հմայքն ու մեծ հեղինակությունը բավական կլինեմ կաթողիկ պրոպագանդը ոչնչացնելու համար»⁵⁶:

Երևանցին ընդդիմախոսելով կաթողիկ պրոպագանդի դեմ, շեշտում էր, որ «հաւատքն մեր ո՛չ է հնացել, զի նորոգեցի, ո՛չ է թերի՝ զի լրացի»⁵⁷, «Պարտավճար»-ում «հայրական սիրով և ցաւակցական սրբտիւ» կոչ էր անում և հրահանգում «ամենայն հետացելոց և տարագրելոց ազգիդ հայոց», չմոռանալ ա. Էջմիածինը և «հռչակելալ Արարատեան դաշտ»-ի պատկերով, Արագածի բարձունքին հավերժորեն պալատող Լուսավորչի անմար կամթելի խորհրդով և Լուսավորչի լույս տեսիլքի «ահեղ զօրութեամբ» պահել-պահպանել մեր եկեղեցու և ժողովրդի ազգային-եկեղեցական միասնությունը. «Եւ դուք, սիրելի ազգդ իմ, ազգ հայոց, ոչ պարտիք զբանս զայս վայրապար իմանալ և զանց առնել, այլ ճշմարտի գիտասցիք և հաւատասցիք»:

Մեր եկեղեցական մատենագրությունը հարուստ է դավանաբանական գրվածքներով: Ամեն մի դավանաբանական գրվածք, միաժամանակ եղել է նաև հայ ժողովրդի ազգային ինքնությունությունը պահող հայրենասիրական մաքստման սրբագան մի գործ:

7. Գիրք հանդիսութեանց տօնից կայսերականաց, 1771, 18 էջ, շարակարգեալ ի Միմեոն կաթողիկոս Էմենայն Հայոց Երևանցոյ յառնաւածովք նորահիւս շարակաւաց և աղօթից:

ԺԸ դարը մեր ազգային-ազատագրական շարժման բնիկում ժամանակաշրջանն է:

Երևանցին շարունակում է իր մայրողնեքի՝ Հակոբ և Ալեքսանդր Զուղայեցի և Հակոբ Ծամախեցի (Հայ ժողովրդի պատմություն, հատոր IV, Երևան, 1972, էջ 197), կաթողիկոսների, Խորաշէլ Օրու և Հովսեփ Էմենի հայրենասիրական գործունեությունը և հանդիսանում է ԺԸ դարի մեր ազգային-ազատագրական շարժման բացառիկ դեմքերից մեկը, որը եկեղեցական, բաղաբանական-հայրենասիրական նպատակներով սերտ կապ է հաստատում ռուսական արքունիքի հետ և թանկագին մասունքներով և նվերներով պատգամավորություն է ունարկում և 1766 թվականի օգոստոսի 1-ին «քրեաց զօրութ» արեւմտաց առ աստուածագոր կայսրուհին Ռուսաց Եկատերինէ»⁵⁸:

Կայսրուհին պատասխանում է 1768 թվականի հուլիսի 20-ին Երևանցու նամակին և արքայական նվերներով մի հրովարտակ ուղարկում նրան, «Հայոց հավատարիմ ազգը» առնելով իր կայսերական, հատուկ «ողորմութեան և հովանաորութեան և շնորհաց» ներքո, և ուր խոսվում է նաև «հայոց ազգը հուսադրած մշտաւոն ողորմութեան և շնորհաց շարունակութեան մասին»⁵⁹:

«Այս թվականը կրնանք նկատել իբր հիմն և արմատ այն սերտ հարաբերության, որ հաստատվեցաւ հայոց կաթողիկոսության և ռուսաց կայսրության մեջ, և որ հաւաքանալով և ամելով հանգեցաւ ռուսական տիրապետության Հայաստանի մի լալ մասին և հայության մի լալ կեսին վրա»⁶⁰:

Երևանցին ահա այս առիթով, ի նշան երախտագիտության դեպի Ռուսաստանն ու ռուսաց արքունիքը, սահմանում է կայսերական մասնավոր մաղթանք՝ գրելով վերոհիշյալ «Գիրք հանդիսութեանց տօնից կայսերականաց»-ը, 1771 թվի հուլիսի 10-ին՝ նշելով, որ կայսրուհու «հովանաորութեամբ ազգս մեր կեայ յաւապէս և պահպանութեամբ նորին կենցաղավարի ապահով և աներկիւղ յառնայն թշնամեաց»: Կայսրուհին, շեշտում է Երևանցին, «Ամենայն Հայոց գտորք Էջմիածինն պատկեալ փառաորեաց և զազգս հայոց՝ իւրոյ ամենապայծառ թագաորութեան սիրելի և իւրային արձանագրեանց»: Այս բացառիկ շնորհների՝ «գերազանց բարերարութեան ոչ ինչ կարէաք հատուցանել զփոխարեմն, վրան որոյ զայս բան բան շարադրեցաք... և կանոնացաք զի ազգս հայոց որքան գոն ընդ օրհնեալ տէրութեամբ նոցին... եկեղեցականօք և աշ-

⁵⁵ Նույն տեղ, էջ 957:

⁵⁶ Նույն տեղ, էջ 958:

⁵⁷ Տօնացոյց, Էջմիածին, 1774, էջ 864:

⁵⁸ Միմեոն Զորագեղի, Յիշատակարան, «Արարատ», 1886, էջ 497:

⁵⁹ Դիւան..., էջ ԺԸ-ԺԱ:

⁶⁰ Մ. արքեպ. Օրմանյան, Ազգապատմ., էջ 8057:

կարսիականոց մեծա հանդիսությունը կատարեցին զայս կարգ»⁶⁵:

Սիմեոն Երևանցու սահմանած կայսերական մայրամասի սույն կարգը անխախտ շարունակվում է Արևելյան Հայաստանի, Կովկասի և Ռուսաստանի հայկական բոլոր եկեղեցիներում, մինչև 1917 թվականի փետրվար ամիսը:

Երևանցին, հայրենասիրական նպատակներով, ջերմ և մտերմիկ հարաբերություններ է պահում նաև Մոսկվայի, Պետերբուրգի, Աստրախանի ուս միտրոպոլիտների հետ: 1779 թվ. ապրիլի 10-ին Մոսկվայի Պատոն Պատրիարքը Երևանցուն ուղղած իր նամակում բարեմաղթում է, որ Աստված լուսաբան եղծցե գծանրացեալ ի վերայ ձեր լուծ բունություն և ազգին հայոց դարձուցե գնահիլին փառս իւր, գլխաւցեալն քրիստոնէութիւն ուրախացուցե ազատութեամբ»⁶⁶:

8. **Ջամբո**, Գիրք որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնափց որպիսութեանց սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն, համաժողովեցեալ և շարադրեցեալ ի Սիմեոն Գառաբար և վշտակոծ կաթողիկոսի Երևանցոյ, Վաղարշապատ, 1873, էջ 304:

Երևանցին «Ջամբո»-ն գրում է 1765 թվականին: Այն տպագրվում է միայն 1873 թվականին:

«Ջամբո»-ն դարձյալ նվիրված է արարատյան հայրենասիրության բարձր պաշտամունքին. և էջմիածնին: Երևանցին այստեղ հանդիսանում է պատմագիր, որն իր առաջ նպատակ է դրել պաշտպանել Մայր Աթոռի ընդհանրական, համագլխին իրավունքները, պարզաբանել նրա կալվածական դրությունը և տնտեսական կարողությունը, առհասարակ ցույց տալ, թե ի՞նչ է եղել Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը, ի՞նչ է նրա ներկան և ի՞նչ է լինելու նրա ապագան»⁶⁷:

«Ջամբո»-ի առաջին մասը հայ եկեղեցու համառոտ պատմությունն է, ինչքան այն կառված է էջմիածնի հետ, «չորում ճառին որպիսութիւնը սրբոյ Աթոռոյս էջմիածնի ի սկզբանէ յօրինեցմանէ», ապա խոսվում է Հայրապետական Աթոռի՝ ս. էջմիածին վերադարձի, Մայր Աթոռի «վերանորոգութեան», Վիրապեցուց մինչև Ժամասխեցի այնտեղ նստած 39 կաթողիկոսների կյանքի և գործունեության մասին, 1441—1765 թվա-

կանը⁶⁸: «Ջամբո»-ի հրատարակիչը Երևանցու գրքի մեջ ավելացրել է իրենից հատուկ մի գլուխ՝ «Վասն Սիմեոնի կաթողիկոսի»⁶⁹:

«Ջամբո»-ում Երևանցին պատմական փաստերի հիման վրա մասնավոր գլուխներ է նվիրել նաև Աղվանից⁷⁰, Աղթամարի⁷¹, Սսի⁷² հակադրող կաթողիկոսությունների գործունեության, բացատրելով, թե որքա՞ն երկպառակություններ, «ապստամբություններ» ստեղծեցին «անհիմն, հետնադոյս, պատահանիստ» տեղական, մասնավոր այդ Աթոռները՝ ջլատելով Ամենայն Հայոց ընդհանրական Հայրապետության իրավասությունը, մինչ նրանք «պարտ էին հետևիլ և հնազանդիլ Արմատոյ, հիմնահաստատ և բնիկ Աթոռոյս սրբոյ էջմիածնի և ի նմանտող կաթողիկոսաց»:

«Ջամբո»-ի պատմական արժեքը կայանում է նաև Մայր Աթոռի տիրախմած թեմերի, վիճակների մասին հաղորդած վիճակագրական տվյալներով, որոնք և «գործին բուն նպատակը կկազմեն»⁷³:

«...Ամբողջ հայոց գրականության մեջ նմանը չունեցող մի ընդարձակ բաժին է պարունակում «Ջամբո»-ը—էջմիածնի տնտեսական պատմությունը, որ հիմնված է կալվածագրերի, շահերից, սուլթաններից և այլ տիրողներից արված թղթերի վրա: Սիմեոնը կարգի է քերել էջմիածնի դիվանում պահվող բոլոր կալվածական գործերն ու թղթերը և նրանցով տալիս է մի ընդարձակ պատկեր, որի մեջ տեսնում ենք, թե ո՞ր կաթողիկոսները փողով գնել են կալվածներ, իրենց ծախսով ջրանցքներ են շինել և այլ տնտեսական ձեռնարկություններ գլուխ քերել... «Ջամբո» այն ժամանակների իրավական դրության և դատաստանական-վարչական քարքերի մի կատարյալ տեսարանացույց է...: Սիմեոն կաթողիկոսի հավաքած վավերագրերը ցույց են տալիս, թե տնտեսական և կուլտուրական ինչ խոշոր կենտրոն էր էջմիածինն Արարատյան դաշտի համար և թե որքան մեծ է եղել նրա դերն իրրև գյուղատնտեսությունը զարգացնող և տարածող»⁷⁴:

Երևանցին վերոհիշյալ տպագրված գործերից բացի ունի նաև անտիպ գործեր, որոնցից են.

1. Լուծմունք արտաքին գրոցն Պորփիրի

⁶⁸ Ջամբո, էջ 8—44:

⁶⁹ Նույն տեղ, էջ 83—44:

⁷⁰ Նույն տեղ, էջ 63—91:

⁷¹ Նույն տեղ, էջ 91—97:

⁷² Նույն տեղ, էջ 98—99:

⁷³ Մ. արքեպ. Օրմանյան, Ազգապատում, էջ 3033:

⁷⁴ Լեո, էջ 959—960:

⁶⁵ Գիրք հանդիսութեանց տօնից կայսերականաց, ս. էջմիածին, 1915, էջ «Յառաջարկություն հեղինակին»: Տես նաև Հայ ժողովրդի պատմություն, հատոր IV, Երևան, 1972, էջ 197:

⁶⁶ Դիւան.... Եւ Մ. Ը. Ը.:

⁶⁷ Լեո, էջ 959:

ներածութեան և Արիստոտէլի Ժ ստորոգութեանց և Պերարմենիասին.

2. Լուծմունք Դաւթի Անյաղթի հինգ առածից.

3. Մեկնութիւն բաժանման գոյից Դաւթի Անյաղթ փիլիսոփային.

4. Լուծմունք Պրոկղի իմաստնոյ (ի վերալուծմանն Սիմէօնի վարդապետին Ջուղայեցոյ).

5. Երկհատոր գիրս Քարոզից. զառաջինն ըստ կերպի ճառից և ներբողից, և երկրորդն տարեկան քարոզ.

6. Ներբողեան ի վեցօրեայ արարչագործութիւնն Աստուծոյ.

7. Ներբողեան ի սուրբ Գրիգոր Լուսաւորչին մեր.

8. Ներբողեան ի սուրբ Աթոռս Էջմիածին⁷⁵.

9. Բանք պիտանիք.

10. Նախերգանք քարոզից.

11. Լուծմունք Արտաքնոց.

12. Բանք և վկայութիւնք ի պէտս քարոզչաց.

13. Մեկնութիւնք Յայտնութեան Յովհաննու.

14. Ողբ առագ ուրբաթու.

15. Կտակ մեծի ուրբաթու.

16. Յառաջաբանութիւն աղօթից⁷⁶:

Երևանցոյ մատենադրական վաստակի մեջ է մտնում նաև նրա նշանաւոր «Յիշատակարան»-ը, 1763—1767 թվականներին, կանոնական թղթերն ու կոնդակները: Երևանցոյ «Յիշատակարան»-ը հրատարակել է Գյուտ քին. Աղանյանը, Թիֆլիս, 1894-ին և կազմում է «Դիւան հայոց պատմութեան» Գ գիրքը, Սիմեոն Երևանցոյ կենսագրությամբ, հավելվածներով և ծանոթություններով⁷⁷:

Երևանցին իր կյանքով ու գործունեությամբ, մատենադրական վաստակով և 17-ամյա հայրապետական իր գահակալությամբ հանդիսացաւ ԺԸ դարի մինչև 80-ական թվականները «այն վեհ և ընտիր հոգիներէն մին, որ իրենց արթուն մտքով, լուրջ ջանքերով և անխնայ աշխատասիրությամբ տիպար գործիչը կկազմեն և իրենց ժամանակի տիրապետող դեմքը կդառնան»⁷⁸:

Երևանցին մեր ժամանակակիցն է իր լուսամիտ, կրթանկեր ու հայրենասիրական գործունեությամբ և մտորումներով, որպէս Հայոց Հայրապետ ու ճշմարտապետ իրավ հայ մարդ:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

⁷⁵ Յուցակ ձեռագրաց, Երևան, Ա հատոր, 1965, Բ հատոր, 1970, տես անձնանունների ցանկ, Սիմեոն Երևանցի:

⁷⁷ Դիւան..., նույն տեղ, էջ 7—891,

⁷⁸ Մ. արքեպ. Օրմանյան, նույն տեղ, էջ 3122:

⁷⁵ Եփրեմ Ջորագեղցի, նույն տեղ, էջ 496: Ջամբո, էջ 84:

